ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 09 մարտի 2021թ.

2021 թվականի մարտի 09-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 12-ի N 45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Բյուրեղավան համայնքի ներկայացուցիչներ առաջադրելու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին ավագանու 12.03.2018թ. N 22-Ա որոշմամբ ստեղծված գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական գործող հանձնաժողովի նախագահ Վահրամ Ապրեսյանը, անդամներ Սլավիկ Հարությունյանը, Գեորգի Աղաջանյանը, աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը և Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Ջինավոր Սարգսյանը:

Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ Վահրամ Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 12-ի N 45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»,
2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Բյուրեղավան համայնքի ներկայացուցիչներ առաջադրելու մասին» համայնքի ավագանու որոշումների նախագծերի քննարկում:

Օրակարգի առաջին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 12-ի N 45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցի շուրջ Լ. Ավուշյանը ներկայացրեց, որ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի՝ Հանձնաժողովի կազմում ընդգրկվող մարզպետարանի ներկայացուցիչների թեկնածությունները որոշում է համապատասխան մարզպետը, ***աշխատակազմի աշխատակցինը և ավագանու անդամի թեկնածությունը՝ համայնքի ավագանին:***
Ելնելով վերոգրյալից և համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ավագանին որոշում է Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 12-ի «Բյուրեղավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամի և աշխատակազմի աշխատակցի անհատական կազմերը հաստատելու մասին» N 45-Ա որոշման 1-ին կետում «համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանին» բառերը փոխարինել «Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ Հայկ Եղյանին» բառերով:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 12-ի N 45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ – 3 Դեմ - 0

Վահրամ Ապրեսյանը ներկայացրեց, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 85-Ա որոշման 1-ին կետով հաստատված օրինակելի կանոնադրության և Կոտայքի մարզպետի 2021 թվականի մարտի 05-ի N 01 /15/01537-2021 գրության համաձայն՝ մարզի տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններում երիտասարդական քաղաքականություն իրականացնելու, տվյալ մարմիններում երիտասարդների պատշաճ մասնակցությունը խթանելու նպատակով նախաձեռնվել է Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմի համալրման գործընթաց: Խորհրդի կազմում պետք է ընդգրկվի երկու ներկայացուցիչ, որոնցից մեկը ներկայացնում է պետական հատվածը, մյուսը՝ ոչ պետական: Ինչպես տեղեկացրեց Վ. Ապրեսյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Մերի Կարապետյանը խորհրդի կազմի համալրման

մասին հայտարարություն է տեղադրել Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական http://www.byureghavan-kotayk.am, ոչ պաշտոնական http://www.byureghavan.am կայքերում, Բյուրեղավանի համայնքապետարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջում, ինչպես նաև Բյուրեղավանի վարչական շենքի՝ հայտարարությունների համար նախատեսված ցուցատախտակում: Խորհրդի կազմի ոչ պետական հատվածի համար դիմել է մեկ հոգի՝ Բյուրեղավան քաղաքի բնակիչ Միքայել Խաչատրյանը (ծնված 1998 թվականի նոյեմբերի 11-ին:): Նա ավարտել է Երևանի պետական բժշկական քոլեջը և Բյուրեղավանի Արվեստի դպրոցը, ինչպես նաև Տեղական ժողովրդավարության դպրոցը, որի շրջանակներում ներկայացրել է համայնքային զարգացման ուղղությամբ ծրագիր և ճանաչվել հաղթող: Հիմնադրել և ղեկավարում է «Բյուրեղավանի երիտասարդների մարզամշակութային միավորումը», որն իրականացնում և ակտիվ մասնակցություն է ունենում մշակութային, սպորտային միջոցառումներին, ճանաչողական արշավներին, կրթական, հասարակական ծրագրերին, նպաստում է երիտասարդների կյանքի և առօրյայի ակտիվացմանը:

Ըստ պահանջի, խորհրդի պետական հատվածը ներկայացնելու է համայնքի ղեկավարի տեղակալ Հայկ Եղյանը:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Բյուրեղավան համայնքի ներկայացուցիչներ առաջադրելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վահրամ Ապրեսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Սլավիկ Հարությունյան

_____ Գեորգի Աղաջանյան